

**ՈՐՈՇԶԻ ՇԱՐՈՂԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ**  
**V-XVII դդ. գՐԱԲԱՐՈՒՄ**  
**(վիճակագրական-համեմատական քննություն)**

**3. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Հայերենի զարգացման միջին (XII-XVII դդ.) և նոր շրջաններում (XVII դարից մինչև մեր օրերը) շարահյուսական համակարգը մեզ հետաքրքրող տեսանկյունից կրել է արմատական փոփոխություն. աստիճանաբար կայունացել ու հաստատուն նորմ է դարձել որոշչի նախադաս և անհամաձայն գործածությունը<sup>1</sup>: Իսկ ինչպիսի՞ն էին որոշչի շարադասության ու համաձայնության ընդհանուր օրինաչափությունները նախ հին գրական հայերենի դասական ենթաշրջանում (V դ.), և ապա ինչպիսի՞ զարգացում և փոփոխություններ ունեցան դրանք հետագա ժամանակներում, այսինքն՝ հետդասական և նախամիջին ենթաշրջաններում (VI-XI դդ.), ինչպես նաև միջին ու նոր շրջաններում (XII-XVII դդ. և XVII դարից հետո), երբ գրաբարը թեև զրկվել էր իր խոսակցական հիմքից, բայց դեռևս լայնորեն շարունակում էր իր գործառույթն արդեն իբրև գրավոր հաղորդակցման միջոց՝ միջին և նոր գրական հայերեններին ու նրանց խոսակցական տարբերակներին զուգահեռ: Ներկա ուսումնասիրության նպատակն է ընդգրկուն վիճակագրությամբ տալ վերոհիշյալ հարցերի հնարավորինս հստակ, ճշգրիտ պատասխանը՝ սկսելով դասական շրջանից մինչև հետագա ժամանակների փոփոխությունները: Փաստական տվյալների քննությունը հասցնում ենք մինչև XVII դ.՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հաջորդ՝ XVIII-XIX դդ. գրաբարի լեզվական իրողությունների վերաբերյալ արդեն հրապարակի վրա է Վ. Համբարձումյանի ծավալուն մենագրությունը, որտեղ, ի շարս այլ հարցերի, ներկայացված է նաև որոշչի շարադասության ու համաձայնության ընդհանուր վիճակագրական պատկերը<sup>2</sup>: XVII դարից առաջ ընկած գրաբարի որոշչի շարադասության ու համաձայնության հարցերն առայժմ որևէ լեզվաբանի կողմից հատուկ վիճակագրական ուսումնասիրության առարկա չեն դարձել: Բացառություն է կազմում մեր նախորդ հոդվածը<sup>3</sup>, որտեղ որոշչի շարադասության և համաձայնության հիմնական օրինաչափությունները ներկայացված են ընդամենը մի քանի երկերի տվյալների վիճակագրական քննությամբ, այն էլ միայն հին շրջանի սահմաններում: Ըստ որում, V դարի համար նկատի էին առնվել միայն Եզնիկի «Եղծ աղանդոց» և Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմի» երկերը: Այստեղ դասական գրաբարի տվյալ երևույթի մասին առավել ամբողջական և ճշգրիտ պատկերացում ունենալու համար ներկայացնելու ենք նաև այդ ժամանակաշրջանի մյուս նշանավոր գրական հուշարձանների՝ Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու պատմական երկերը, իսկ թարգմանական

<sup>1</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 36-49:

<sup>2</sup> Տե՛ս Վ. Համբարձումյան, Գրաբարի գործառույթունը որպես գրական լեզու ԺԸ - ԺԹ դդ., Եր., 1990, էջ 333-337:

<sup>3</sup> Տե՛ս Հ. Ավետիսյան, Գրաբարի որոշչի շարադասության և համաձայնության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի Համալսարանի», 2003, № 2, էջ 62-72:

գրականությունից՝ Աստվածաշնչի «Ծնունդը», «Թագաորութեանց Բ», «Մաղմուք», «Մարգարէութիւն Յսայեայ», «Աւետարան ըստ Մատթէոսի», «Աւետարան ըստ Յովհաննոսի», «Գործք առաքելոց» գրքերի, ինչպէս նաև Բարսեղ Կեսարացու «Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն» (էջ 1-150) երկի տվյալների փիճակագրությունը: Այժմ անցնենք հարցի քննությանը՝ ըստ առանձին շրջանների:

### Որոշիչ շարադասությունն ու համաձայնությունը V դ. գրաբարում

**Ա) Շարադասություն.** - Մեր վերոհիշյալ հոդվածում Եզնիկի և Եղիշեի երկերի ամբողջ տվյալների փիճակագրությունը մեզ բերել էր այն հետևության, որ ինչպես հին շրջանում (V-XI դդ.), այնպես էլ նրա դասական ենթաշրջանում, իրոք, գերակշռում էին, այն էլ պատկառելի չափերով, մախադաս և չհամաձայնեցված որոշիչները: Վիճակագրությունը միաժամանակ ցույց է տալիս, որ հենց այս տեսակետից զգալի տարբերություն կա նշված երկերի միջև: Այսպես, եթե «Եղծ աղանդոց»-ում մախադաս որոշիչները կազմում են 74.70%, ապա Եղիշեի երկում՝ 82.02%, այսինքն՝ Եղիշեն մոտ 7 տոկոսով ավելի է գործածել մախադաս որոշիչներ, քան Եզնիկը: Իսկ թե ինչպիսին է պատկերը V դարի նաև մյուս գրական հուշարձաններում, կարելի է տեսնել հետևյալ աղյուսակում:

*Աղյուսակ 1*

**V դարի գրաբարի որոշիչ շարադասության**

N	Հեղինակ, երկ.	Որոշիչ	Նախադաս	Հետադաս	Ածական որոշիչ	Նախադաս	Հետադաս
1.	Եզնիկ	1435	1072(74.70%)	363(25.29%)	636	445(69.96%)	191(30.03%)
2.	Ագաթանգեղոս	4475	3281(73.31%)	1194(26.68%)	2609	1944(74.51%)	665(25.48%)
3.	Ինուզանդ	4373	2905(66.43%)	1468(33.56%)	2015	1426(70.76%)	589(29.23%)
4.	Խորենացի	3881	2532(65.24%)	13.49(34.75%)	1907	1307(68.53%)	600(31.46%)
5.	Եղիշե	2670	2190(82.02%)	480(17.97%)	1546	1259(81.43%)	287(18.56%)
6.	Փարպեցի	5423	4285(79.01%)	1138(20.98%)	3069	2569(83.70%)	500(16.29%)
7.	Ծնունդք	1099	543(49.40%)	556(50.59%)	252	24(9.52%)	228(90.47%)
8.	Թագ. Բ	579	313(54.05%)	266(45.94%)	109	13(11.92%)	96(88.07%)
9.	Մաղմուք	613	340(55.46%)	273(44.53%)	253	43(16.99%)	210(83.00%)
10.	Եսայի	903	368(40.75%)	535(59.24%)	323	97(30.03%)	226(69.96%)
11.	Մատթեոս	599	289(48.24%)	310(51.75%)	207	56(27.05%)	151(72.94%)
12.	Յովհան	318	148(46.54%)	170(53.45%)	106	41(38.67%)	65(61.32%)
13.	Գործք	783	342(43.67%)	441(56.32%)	242	97(40.08%)	145(59.91%)
14.	Բարսեղ	1528	1241(81.21%)	287(18.78%)	943	770(81.65%)	173(18.34%)
	Ընդամենը	28679	19849(69,21%)	8830(30,78%)	14217	10091(70,97%)	4126(29,02%)

Ըստ այս տվյալների՝ մախադաս որոշիչները հետադասներից ավել են 38.43%-ով, իսկ նախադաս ածական որոշիչները՝ 41.95%-ով: Ինչպես որ Եզնիկի և Եղիշեի երկերում կա շարադասական որոշ տարբերություն՝ ավելի քան 7 տոկոսի հասնող, այդպես էլ շարադասական փիճակը բացարձակապես մույնը չէ նաև մյուս հեղինակների երկերում: Այսպես, օրինակ, եթե մախադաս որոշիչները շատ բարձր տոկոս են կազմում Բարսեղ Կեսարացու, Ղազար Փարպեցու և Ագաթանգեղոսի երկերում՝ համապատասխանաբար 81.21%, 79.01% և 73.31%, ապա Բուզանդի և Մովսես Խորենացու երկերում մախադաս որոշիչների քանակը հետադասների համեմատությամբ նվազում է շուրջ 7-15 տոկոսով՝ կազմելով համապատասխանաբար 66.43% և 65.24%: Շարադասական որոշ տարբերություններ կան նաև ածական որոշիչների դեպքում: Աղյուսակից դժվար չէ նկատել, որ V դարի ողջ մատենագրության մեջ որոշիչ շարադասության և համաձայնության առումով, իբրև եզակի բացառություն, առանձնանում է Աստվածաշունչը, որտեղ, ի

տարբերություն ինքնուրույն և թարգմանական մյուս բոլոր երկերի, գերակշռում են հետադաս որոշիչները: Ժամանակին այս մասին նշվել է որոշիչ-որոշյալի կապակցությանը նվիրված մենագրության մեջ, ինչպես՝ «Վ դարի ամբողջ հայ մատենագրության մեջ միայն Աստվածաշնչում է, որ որոշիչներն ավելի շատ ետադաս են: Իսկ դա բացատրվում է Աստվածաշնչի բնագրի լեզվի ազդեցությամբ, որին հայ թարգմանիչները աշխատել են հնարավորին չափ հարազատ մնալ»<sup>4</sup>: Հետագայում նույն կարծիքն են հայտնել պրոֆեսորներ Վ. Քոսյանն ու Վ. Առաքելյանը<sup>5</sup>: Բերված աղյուսակի տվյալներով Աստվածաշնչում նախադաս որոշիչները կազմում են 47.87%, հետադասները՝ 52.12%: Տարբերությունը շատ ավելի մեծ է ածական որոշիչների դեպքում, որտեղ նախադասները կազմում են 24.86%, հետադասները՝ 75.03%: Աստվածաշնչի առանձին գրքերում ևս որոշիչների շարահատության պատկերը միատեսակ չէ: «Թագաւորութեանց Բ» գրքում և սաղմոսներում, իբրև բացառություն, մի փոքր (մոտ 9-11%-ով) գերակշռում են նախադաս, իսկ մյուս գրքերում մոտավորապես նույն չափերով՝ հետադաս որոշիչները: Հետաքրքիր պատկեր են ներկայացնում ածական որոշիչները: Այստեղ, առանց բացառության, բոլոր դեպքերում ահռելի չափերով գերակշռում են հետադաս կիրառությունները՝ հասնելով 60-90%-ին:

**Բ) Համաձայնություն.** - Պետք է ասել, որ այստեղ էլ տոկոսային հարաբերակցությունը հոգուտ չհամաձայնեցվածների մոտավորապես նույնն է, ինչ շարահատության դեպքում, որը պարզորոշ կարելի է տեսնել թիվ 2 և 3 աղյուսակներում.

## Աղյուսակ 2

### V դարի գրաբարի որոշիչ համաձայնության

N	Հեղինակ, երկ.	Համաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս	Անհամաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս
1.	Եզնիկ	402(43,45%)	234	168	523(56,54%)	497	26
2.	Ագաթանգեղոս	947(30,87%)	375	572	2120(69,12%)	2027	93
3.	Բուզանդ	1139(42,91%)	562	577	1515(58,08%)	1404	111
4.	Խորենացի	1275(49,86%)	712	563	1282(50,13%)	1130	152
5.	Եղիշե	388(21,17%)	221	167	1444(78,82%)	1340	104
6.	Փարսեցի	1130(29,25%)	600	530	2733(70,74%)	2668	65
7.	Ծնունդք	296(64,06%)	85	211	166(35,93%)	96	70
8.	Թագ. Բ	144(48,97%)	40	104	150(51,02%)	139	11
9.	Սաղմոսք	135(34,26%)	20	115	259(65,73%)	247	12
10.	Եսայի	286(53,55%)	37	249	248(46,44%)	229	19
11.	Մատթեոս	189(61,96%)	60	129	116(38,03%)	102	14
12.	Յոհան	90(64,28%)	27	63	50(35,71%)	46	4
13.	Գործք	253(57,79%)	53	200	210(42,20%)	175	35
14.	Բարսեղ	241(21,42%)	115	126	884(78,57%)	863	21
	Ընդամենը	6915(37,14%)	3141	3774	11700(62,85%)	10963	737

Ըստ այս աղյուսակների՝ որոշիչների ընդհանուր քանակը 18615 է, որից 6915-ը (37.14%) համաձայնեցվել են, 11700-ը (62,85%) չեն համաձայնեցվել, այսինքն՝ չհամաձայնեցվածները գերազանցում են համաձայնեցվածներին շուրջ 26%-ով: Ածական որոշիչների ընդհանուր քանակն է 9893, որից համաձայնեցվել են 3184-ը (32,18%), չեն համաձայնեցվել 6709-ը (67,81%): Տարբերությունը շուրջ 3667% է, իսկ Աստվածաշնչում, ի տարբերություն V դարի մյուս բոլոր ինքնուրույն և թարգմանական երկերի, համաձայնեցված որոշիչները ոչ միայն քանակով չեն զիջում չհամաձայնեցվածներին, այլև, ընդհակառակը, զգալիորեն գերազանցում

<sup>4</sup> Հ. Ավետիսյան, Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում, Եր., 1972, էջ 11:

<sup>5</sup> Տե՛ս Վ. Քոսյան, Գրաբարի բառակապակցությունները, Եր., 1980, էջ 39, Վ. Առաքելյան, V դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Եր., 1984, էջ 215-220:

են նրանց: Այսպես, որոշիչների ընդհանուր քանակը այնտեղ 2592 է, որից համաձայնեցվել են 1393-ը (53.74%), չեն համաձայնեցվել 1199-ը (46.25%): Ածական որոշիչներից համաձայնեցվել է 69.35%-ը, չի համաձայնեցվել 30.64% -ը: Ըստ որում Աստվածաշնչի տարբեր գրքերում կան զգալի տարբերություններ: Եթե դրանց մի մասում (Ծնունդք, Թագաւորութեանց Բ, Սաղմոսք) համաձայնեցված ածական որոշիչները կազմում են ավելի քան 75-87%, մյուս մասում՝ 58-63%: Պետք է ասել, որ այս կարգի բավական տարբերություն կա նաև մյուս երկերում՝ ինքնուրույն թե քարզմանական: Այսպես, չհամաձայնեցված որոշիչների գերակշռությունը շատ մեծ է հատկապես Եղիշեի, Կեսարացու, Փարպեցու և Ագաթանգեղոսի երկերում՝ կազմելով մոտ 69-79%, մինչդեռ Եզնիկի և Բուզանդի երկերում դրանք համեմատաբար բավական քիչ են՝ 56-57%: Սակայն այս բոլորի մեջ առանձնակի տեղ է գրավում Խորենացին, որը գրեթե հավասար չափով գործածել է և՛ համաձայնեցված, և՛ չհամաձայնեցված որոշիչներ: Նկատելի է նաև, որ անհամաձայնության մեջ, ի տարբերություն Աստվածաշնչի, համեմատաբար մեծ է ածական որոշիչների բաժինը, որոնք մոտ 36%-ով գերազանցում են համաձայնեցվածներին, մինչդեռ ընդհանուր որոշիչների դեպքում այդ տարբերությունը կազմում է 26%:

### Աղյուսակ 3

#### V դարի գրաբարի ածական որոշիչի համաձայնության

N	Հեղինակ, երկ.	Համաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս	Անհամաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս
1.	Եզնիկ	162(38,66%)	56	106	257(61,33%)	257	0
2.	Ագաթանգեղոս	480(25%)	156	324	1440(75%)	1420	20
3.	Բուզանդ	495(37,33%)	225	270	831(62,66%)	787	44
4.	Խորենացի	661(49,36%)	327	334	678(50,63%)	649	29
5.	Եղիշէ	169(15,47%)	61	108	923(84,52%)	856	67
6.	Փարպեցի	542(23,95%)	288	254	1721(76,04%)	1701	20
7.	Ծնունդք	105(87,5%)	5	100	15(12,5%)	12	3
8.	Թագ. Բ	33(84,61%)	2	31	6(15,38%)	5	1
9.	Սաղմոսք	105(75,53%)	5	100	34(24,46%)	29	5
10.	Եսայի	120(62,82%)	9	111	71(37,17%)	61	10
11.	Մատթեոս	64(65,30%)	9	55	34(34,69%)	24	10
12.	Յոհան	34(65,38%)	5	29	18(34,61%)	17	1
13.	Գործք	89(57,79%)	9	80	65(42,20%)	65	0
14.	Բարսեղ	125(16,86%)	30	95	616(83,13%)	613	3
	Ընդամենը	3184(32,18%)	1187	1997	6709(67,81%)	6496	213

Հարկ է նշել, որ V դարի հեղինակների՝ Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Եղիշեի, Փարպեցու և Կեսարացու երկերում նախադաս, երբեմն էլ հետադաս ածական որոշիչների համաձայնության մեջ զգալի դեր է խաղում հաճախականության գործոնը: Այսպես, մեծ և սուրբ ածականներով արտահայտված որոշիչները Ագաթանգեղոսի երկում կազմում են նախադաս համաձայնեցված ածական որոշիչների 46.60%-ը, Բուզանդի երկում՝ 80%-ը, Խորենացու երկում՝ 33.94%-ով, Փարպեցու երկում՝ 43 անգամ գործածված երանելի ածականի հետ միասին՝ 70-80%-ը: Եղիշեի երկում միայն մեծ-ով արտահայտված որոշիչները կազմում են նախադաս համաձայնեցվածների շուրջ 82%-ը, Կեսարացու երկում՝ 63%-ը: Այսպիսով, եթե նկատի չունենանք հաճախականությունը, ստացվում է, որ, օրինակ, Եղիշեի երկում համեմատաբար բավական փոքր տոկոս են կազմում նախադաս համաձայնեցված ածական որոշիչները: Ի՞նչ կարելի է ասել բազմավանկ ածականներով կամ այլ խոսքի մասերով արտահայտված նախադաս որոշիչների համաձայնության վերաբերյալ: Այս հարցում կան որոշ տարակարծություններ: Այս-

պես, Վ. Համբարձումյանի վերոհիշյալ աշխատության մեջ նշված է. «... հին գրական հայերենում նախադաս որոշիչը, բացառությամբ միավանկ բառերի, չէր համաձայնում իր որոշյալին ... մեզ հետաքրքրող շրջանի (XVIII-XIX դդ- Հ. Ա.) գրաբարում նախադաս բազմավանկ որոշիչները երբեմն համաձայնում էին իրենց որոշյալներին»<sup>6</sup>: Ստացվում է, որ հին գրական հայերենում բազմավանկ որոշիչները բոլորովին չէին համաձայնում որոշյալներին նույնիսկ առանձին դեպքերում: Բայց երևույթն իրականում այդպես չէ: «Որոշիչ-որոշյալի կապակցությունը գրաբարում» աշխատության մեջ տարբեր առիթներով խոսելով ամսականով, դերանունով, թվականով, գոյականով արտահայտված որոշիչների համաձայնության մասին, վկայակոչվել են տարբեր հեղինակներից բազմաթիվ ու բազմատեսակ օրինակներ, որոնցում բազմավանկ որոշիչները հոլովով ու թվով համաձայնել են իրենց լրացյալներին, ինչպես՝ յանշնչոցն արարածոց, յանօրիաց մոգուցն, յամենապարզևողէն Աստուծոյ (էջ 23-24), հրաշափառագունի բանի, սիրելեաց վկայիցն (28), ցամենեսին ցիշխանսն (59), երկուտասանից առաքելոցն (74), յերեքտասներորդէ ամէ (82) ևն:

### Որոշիչ շարադասությունն ու համաձայնությունը VI-XI դդ. գրաբարում

Սույն հարցի բնության ընթացքում օգտվել ենք հիմնականում այն տվյալներից, որոնք հրապարակված են վերը նշված մեր հոդվածում: Չնայած VI-XI դդ. հայ հին գրական լեզվի զարգացման մեջ դրսևորվող ինչ-ինչ առանձնահատկություններին (բառապաշարային, հնչյունական, ձևաբանական-շարահյուսական զանազան փոփոխություններ, հունաբանության ազդեցություն, նորակազմությունների աճ, առանձին հեղինակների մոտ այս կամ այն չափով ոճի խրթնացում ևն)՝ ամբողջության մեջ գրեթե նույնությամբ պահպանվել են որոշիչ շարադասության և համաձայնության ընդհանուր նորմաները: Այս շրջանում էլ որոշիչներն ունեն դեռևս ազատ շարադասություն, հետադասվելիս համաձայնեցվում, իսկ նախադասվելիս սովորաբար չեն համաձայնեցվում իրենց որոշյալներին՝ երկու դեպքում էլ, մանավանդ նախադասվելիս, ունենալով առանձին շեղումներ ու բացառություններ: Այս իրողությունը աստիճանաբար ավելի ու ավելի է հեռացնում գրական լեզուն բնականոն փոփոխվող իր խոսակցական հիմքից, որի գլխավոր պատճառներից մեկը, ինչպես նկատել է Գ. Ջահուկյանը, «նոր հեղինակների՝ հին օրինակներին հետևելու հակումն» էր, «որոշ մատենագիրների՝ «գեղջուկ բանից» խուսափելու, հին լեզվական նորմաներին հետևելու ձգտումը»<sup>7</sup>: Ահա որոշիչ շարադասության և համաձայնության վիճակագրությունը նշված ժամանակաշրջանում:

#### Ա) Եարադասություն

Աղյուսակ 4

#### VI-XI դդ. գրաբարի որոշիչ շարադասության

N	Հեղինակ	Որոշիչ	Նախադաս	Հետադաս
1.	Նարեկացի	5236	3593(68.62%)	1643(31.37%)
2.	Ա. Լաստիվերցի	1640	1335(81.40%)	305(18.59%)
3.	VI-XIդդ.	2057	1531(74.42%)	526(25.57%)
Ընդամենը		8933	6459(72.30%)	2474(27.69%)

<sup>6</sup> Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 335:

<sup>7</sup> Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 43:

## VI-XI դդ. գրաբարի ածական որոշիչ շարադասության

N	Հեղինակ	Որոշիչ	Նախադաս	Հետադաս
1.	Նարեկացի	3827	2567(67.07%)	1260(32.92%)
2.	Ա. Լաստիվերցի	1041	911(87.51%)	130(12.48%)
3.	VI-XIդդ.	1169	900(76.98%)	269(23.01%)
Ընդամենը		6037	4378(72.51%)	1659(27.48%)

Այս և դասական շրջանի աղյուսակների տվյալների համեմատությունը ցույց է տալիս հետևյալը: Եթե դասական շրջանում նախադաս որոշիչները կազմում էին 69.21%, ածական որոշիչները՝ 70.97%, ապա այս շրջանում համապատասխանաբար՝ 72.51% և 72.30%, այսինքն՝ նախադաս կիրառություններն ավելացել են 2-3%-ով: Սակայն բոլորովին այլ պատկեր է ստացվում, երբ նկատի ենք ունենում հեղինակների երկերի տվյալներն առանձին-առանձին: Ինչպես V դարում, այս շրջանում ևս բավական մեծ տարբերություններ կան տարբեր հեղինակների միջև որոշիչ շարադասության հարցում: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ VI-XI դդ. նրանց երկերը պայմանականորեն բաժանում ենք երեք խմբի: Առաջինի մեջ մտնում են որոշիչը մոտ 55-70, երկրորդի մեջ՝ 70-80, երրորդի մեջ՝ 80-ից բարձր տոկոսով գործածողները: Ահա.

## I խումբ

Անանուն Զրուցագիր (X-XIդդ.)՝ 55%, ածական որոշիչ՝ 54%, Սեբեոս (VIդդ.) 58,82%, Կոմիտաս (Vդդ.)՝ 61.34% և 68.23%, Հովհ. Դրասխանակերտցի (IX-X դդ.)՝ 62.74% և 64.85%, Դավթակ Քերթոզ (VIIդդ.)՝ 64.38% և 66.34%, Թովմա Արծրունի (IXդդ.)՝ 64.15% և 82.75%, Անանիա Շիրակացի (VIդդ.)՝ 66.12% և 72.05%, Ստեփանոս Տարոնեցի (X-XIդդ.)՝ 66,05% և 66.60%, Հովհ. Մայրազոմեցի (VI-VIIդդ.)՝ 67.39% և 54.16%, Գրիգոր Նարեկացի (X դդ.)՝ 68.62% և 67.07%, Հովհ. Մամիկոնյան (VIIIդդ.)՝ 69.13% և 66.66%, Ղևոնդ (VIIIդդ.)՝ 69.84% և 81,81%:

## II խումբ

Մովսես Կաղանկատվացի (Xդդ.)՝ 70.08% և 86,84%, Ներսես Կաթողիկոս (VIդդ.)՝ 73.73% և 72.34%, Արտավազդ (VIIIդդ.)՝ 74,26% և 90.62, Ստեփանոս Քահանա (IXդդ.)՝ 76.78% և 76.56%, Գրիգոր Մագիստրոս (X-XIդդ.)՝ 76.71% և 81.81%:

## III խումբ

Հովհաննես Օձնեցի (VII-VIIIդդ.)՝ 80.39% և 88.73%, Լաստիվերցի (XIդդ.)՝ 81.40% և 87.51%, Պետրոս Սյունյաց Եպիսկոպոս (VIդդ.)՝ 86.95% և 88.23%, Սահակ Չորափորեցի (VIIդդ.)՝ 87.62% և 90.41%, Թեոդորոս Քոթենավոր (VIդդ.)՝ 95.52% և 94.73%:

Այս երեք խմբերում ածական որոշիչների գործածության տոկոսն ընդհանուր առմամբ համընկնում է ընդհանուրին, բացի մի քանի դեպքերից, երբ նրանք 3-13%-ի սահմաններում գերազանցում են մյուսներին: Որոշիչ նախադաս շարադասությունը, ինչպես նաև ածականով արտահայտվածներինը, այն երկերում, որտեղ կազմում է 80-95%, գրեթե ընդհուպ մոտենում է բացարձակի և կայուն օրինաչափության վերածվելու սահմանագծին: Ուշագրավ է, որ երբեմն ուշ շրջանի հեղինակների երկերում նախադաս որոշիչներն ավելի ցածր տոկոս են կազմում, քան ավելի վաղ շրջանի երկերում: Այսպես, օրինակ, IX-X դդ. հեղինակներ Դրասխանակերտցու, Արծրունու, Գրիգոր Նարեկացու և Տարոնեցու երկերում նախադաս որոշիչները կազմում են մոտ 63%, ածական որոշիչները՝ 63-83%, իսկ VI-VII դդ. հեղինակներ Ներսես Կաթողիկոսի, Հովհ. Օձնեցու, Պետրոս Սյունյաց Եպիսկոպոսի

և Ա. Չորափորեցու երկերում՝ շուրջ 74-88%, ածական որոշիչները՝ 72-90%:

**Բ) Համաձայնություն**

Աղյուսակ 6

**VI-XI դդ. գրաբարի որոշիչի համաձայնության**

N	Հեղինակ	Համաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս	Անհամաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս
1.	Նարեկացի	1228(38,94%)	431	797	1925(61,05%)	1875	50
2.	Լաստիվերցի	247(21,32%)	143	104	911(78,67%)	877	34
3.	VI-XIդդ.	449(33,30%)	234	215	899(66,69%)	839	60
Ընդամենը		1924(33,99%)	808	1116	3735(66%)	3591	144

Աղյուսակ 7

**VI-XI դդ. գրաբարի ածական որոշիչի համաձայնության**

N	Հեղինակ	Համաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս	Անհամաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս
1.	Նարեկացի	805(34,08%)	180	625	1557(65,91%)	1531	26
2.	Լաստիվերցի	94(12,31%)	50	44	669(87,68%)	668	1
3.	VI-XIդդ.	194(24,25%)	63	131	606(75,75%)	590	6
Ընդամենը		1093(27,84%)	293	800	2832(72,15%)	2789	33

Ըստ այս աղյուսակների՝ VI-XIդդ. մատենագիրների երկերի՝ մեր ընտրած հատվածներում թեք հոլովներով գործածվել է ընդամենը 5659 որոշիչ, որից 1924-ը (33.99%) համաձայնեցվել է, իսկ 3735-ը (66%) չի համաձայնեցվել: Ածական որոշիչների ընդհանուր քանակը 3925 է, որից համաձայնեցվել է 1093-ը (27.84%), իսկ 2832-ը (72.15%) չի համաձայնեցվել: Համաձայնեցված որոշիչներից 808-ը (41.99%) նախադաս է, 1116-ը (58%)՝ հետադաս: Նախադաս համաձայնեցված որոշիչները կազմում են 18.36%, հետադաս չհամաձայնեցվածները՝ 11.42%, նախադաս անհամաձայն ածական որոշիչները՝ 9.50%, հետադաս չհամաձայնեցվածները՝ 3.96%: Այսպիսով, նախադաս համաձայնեցված որոշիչները 6-7%-ով ավելի են, քան հետադաս չհամաձայնեցվածները: Իսկ սա նշանակում է, որ համաձայնության մեջ ընդհանուր նորմաներից կատարվող շեղումները նախադասների դեպքում 6-7%-ով ավելի են, քան հետադասների դեպքում, մի քան, որը պետք է անպայմանորեն նկատի ունենալ որոշիչի համաձայնության ընդհանուր կանոնները սահմանելիս:

Եթե V դարում չհամաձայնեցված որոշիչները գերազանցում էին համաձայնեցվածներին շուրջ 26%-ով, իսկ չհամաձայնեցված ածական որոշիչները՝ մոտ 36%-ով, ապա VI-XIդդ համապատասխանաբար՝ 32%-ով և 44%-ով: Ինչպես վերը նշվեց, շարադասական տարբերությունը այս երկու ժամանակաշրջանների տվյալների միջև բավական քիչ է՝ ընդամենը 2-3%, մինչդեռ համաձայնության մեջ տարբերությունը համեմատաբար մեծ է՝ շուրջ 6-13%՝ հօգուտ չհամաձայնեցվածների:

Վերը նշեցինք, որ շարադասության հարցում բավական տարբերություն կա VI-XIդդ հեղինակների միջև: Նույնը նկատվում է նաև համաձայնության մեջ: Այստեղ էլ հեղինակներին կարելի է բաժանել երեք խմբի՝ ըստ որոշիչների համաձայնեցվածության աստիճանի: Առաջինի մեջ մտնողները որոշիչները համաձայնեցրել են 8.51-30%-ով, երկրորդները՝ 31-38%-ով, երրորդները՝ 44-49%-ով: Իսկ ըստ առանձին հեղինակների՝ վիճակագրական ընդհանուր պատկերը հետևյալն է.

Խումբ	N	Հեղինակ	Որոշիչ		Ածական որոշիչ	
			Համաձայն	Անհամաձայն	Համաձայն	Անհամաձայն
I	1.	Քոթենավոր	8.51%	91.48%	2.56%	97.43%
	2.	Պետրոս Սինեաց եպ.	14.81%	85.18%	8.69%	91.30%
	3.	Քերթոլ	15.62%	84.37%	13.04%	86.95%
	4.	Լաստիվերցի	21.32%	78.67%	12.31%	87.68%
	5.	Արտաազդ	22.72%	77.27%	12%	88%
	6.	Ստ. Սինեցի	26.66%	73.33%	13.63%	86.36%
	7.	Մագիստրոս	25.45%	74.54%	14.81%	85.18%
	8.	Ստ. Տարոնեցի	27.53%	72.46%	17.64%	82.35%
	9.	Չորափորեցի	29.57%	70.42%	21.56%	78.43%
	10.	Շիրակացի	30.23%	69.76%	22.64%	77.35%
	11.	Նարեկացի	30.23%	69.76%	17.64%	82.35%
II	1.	Մոուտ	30.86%	69.13%	15.38%	84.61%
	2.	Ղևոնդ	31.03%	68.96%	0%	100%
	3.	Արծրունի	33.33%	66.66%	23.07%	76.92%
	4.	Մամիկոնեան	34.28%	65.71%	33.33%	66.66%
	5.	Զրուցագիր	35.59%	64.40%	52%	48%
	6.	Կաղանկատվացի	36.53%	63.46%	26.08%	73.91%
	7.	Դրասխանակերտցի	37.68%	62.31%	35.84%	64.15%
	8.	Կոմիտաս	37.77%	62.22%	30.55%	69.44%
	9.	Մայրազոմեցի	37.83%	62.16%	47.61%	52.38%
III	1.	Օծնեցի	44.44%	55.55%	30.76%	69.23%
	2.	Ստ. Քահանա	45.83%	54.16%	30.76%	69.23%
	3.	Ներսես Կաթողիկոս	46.96%	53.03%	43.75%	56.25%
	4.	Սեբեոս	49.12%	50.87%	52.63%	47.36%

Ինչպես տեսնում ենք, ամենից քիչ համաձայնեցված որոշիչներ գործածել է Քոթենավորը՝ 8.51%: Ածական որոշիչների դեպքում այդ քիվը հասնում է առավել նվազագույնի՝ 2,5%-ի: Իսկ ամենից շատ համաձայնեցված որոշիչներ գործածել է Սեբեոսը՝ 49.12%: Ածական որոշիչների դեպքում համաձայնեցվածները նույնիսկ մի քանի տոկոսով գերազանցում են չհամաձայնեցվածներին: Առհասարակ նկատելի է, որ ածական որոշիչների դեպքում չհամաձայնեցվածները ընդհանուր առմամբ մի փոքր ավելի են համաձայնեցվածներից, իսկ Ղևոնդի մոտ անհամաձայնությունը հասնում է 100%-ի. թեք հոլովներով մա գործածել է ընդամենը 10 ածական որոշիչ, որոնք բոլորն էլ նախադաս են և անհամաձայն: Ինչպես շարադասության դեպքում, համաձայնության մեջ ևս կարևոր դեր է խաղում անհատական գործոնը: Այսպես, օրինակ, Դրասխանակերտցին և Ստեփանոս Քահանան գրեթե նույն ժամանակաշրջանի հեղինակներ են (IX-X դդ.), բայց առաջինի երկուստեք համաձայնեցված որոշիչները կազմում են 37.68%, երկրորդին՝ 45.83%: Կամ, ասենք, VI-VII դդ. հեղինակներ Պետրոս Սյունեցին և Դավթակը 2-3 անգամ քիչ են գործածել համաձայնեցված որոշիչներ (առաջինը՝ 14.81%, երկրորդը՝ 15.62%), քան IX-X դդ. հեղինակներ Ստեփանոս Քահանան և Դրասխանակերտցին (առաջինը՝ 45.83%, երկրորդը՝ 37.68%):



## Որոշի շարադասությունն ու համաձայնությունը XII-XVII դդ. գրաբարում

XII-XVII դարերն ընդգրկում են մի կողմից՝ միջին գրական հայերենի ժամանակահատվածը (XII-XVI դդ.), մյուս կողմից՝ նոր գրական հայերենի առաջին ենթաշրջանի առաջին կեսը (XVIII դ.), երբ միաժամանակ առկա էին տարբեր բարբառային իրողություններ, ինչպես նաև՝ իր գոյությունը դեռևս շարունակող հին գրական հայերենը՝ գրաբարը: Վերջինս այս ժամանակներում արդեն դադարել էր խոսակցական լինելուց և պահպանվում էր սոսի իբրև գրավոր հաղորդակցման միջոց: Գրաբարով գրողները, բնականաբար, իրենց ուժերի ներածին չափ պիտի հետևեին V դարի լեզվական ընդհանուր նորմաներին, որոնք հենց այն ժամանակ էլ ընդհանրությունների հետ մեկտեղ ունեին նաև ինչ-ինչ տարբերություններ առանձին հեղինակների երկերում: Մյուս կողմից՝ XII-XVIIդդ. հեղինակները, իրենց կամքից անկախ կամ ինքնակամ, չէին կարող այս կամ այն չափով չկրել նոր ժամանակների մտածողության, լեզվական նոր երևույթների (միջին և նոր գրական հայերեններ) անխուսափելի ազդեցությունը: Ինչպես կտեսնենք ստորև, հիմնականում հենց այս հունով էլ ընթացել է հին գրական հայերենի զարգացումը նշված ժամանակաշրջանում, որով էլ ընդհանուր առմամբ պայմանավորված են այդ ժամանակահատվածի լեզվական ընդհանրություններն ու առանձին տարբերությունները՝ և՛ տվյալ փուլում, և՛ V դարի լեզվական համապատասխան իրողությունների համեմատությամբ: Այս շրջանի որոշի շարադասության և համաձայնության առանձնահատկություններն առավել ամբողջական ու ճշգրիտ պատկերացնելու համար վիճակագրական քննության ենք ենթարկել բավական լայն ծավալ ընդգրկող պատմական, գեղարվեստական, աստվածաբանական, եկեղեցական, վարքագրական, փիլիսոփայական, տոմարագիտական, քերականական և այլ բնույթի երկեր՝ ներկայացնելով դրանք համառոտագրություններով և ըստ ժամանակագրության:

### Ա) Շարադասություն

Աղյուսակ 9

#### XII-XVII դարերի գրաբարի որոշի շարադասության

N	Հեղինակ, երկ	Որոշիչ	Նախադաս	Հետադաս
1.	ՅՄԻ	364	252(69.23%)	112(30.76%)
2.	ՄՈՒԺ	1711	1234(72.12%)	477(27.87%)
3.	ՆՇՈՅ	654	361(55.19%)	293(44.80%)
4.	ՆՇԹԸ	1275	1044(81.18%)	231(18.11%)
5.	ՆԼԲ	447	332(74.27%)	115(25.72%)
6.	ՄԳԳԴ	1201	961(80.01%)	240(19.98%)
7.	ՄԳԱ	245	177(72.24%)	68(27.75%)
8.	ՎԱԳՀ	1287	1095(85.08%)	192(14.91%)
9.	ԿԳՊՀ	2083	1360(65.29%)	723(34.70%)
10.	ՎԱՃՆ	1419	1177(82.94%)	242(17.05%)
11.	ՎԱՊՏ	554	325(58.66%)	229(41.33%)
12.	ՅՈՎՍ	741	650(87.71%)	91(12.28%)
13.	ՍՕՊՍ	1897	1395(73.53%)	502(26.46%)
14.	ՅԹՅԶ	612	476(77.77%)	136(22.22%)
15.	ԱՄՀԱ	777	597(76.83%)	180(23.16%)
16.	ԳՏԱՀ	1462	1142(78.51%)	320(21.48%)
17.	ՀՂՏ	1383	1200(86.76%)	183(13.23%)
18.	ԱՄԱ	890	503(56.51%)	387(43.48%)
19.	ԹՄՊ	1422	1020(71.72%)	402(28.27%)
20.	ԴԶՄԶ	856	738(86.21%)	118(13.78%)
21.	ԱԶԳՏ	509	406(79.76%)	103(20.23%)
22.	ԱԴԳՊ	2317	1813(78.02%)	504(21.97%)
23.	ԶՍԶՊ	884	573(64.81%)	311(35.18%)
24.	ԽԱԳԶ	354	289(81.63%)	65(18.36%)
25.	ԳՀՎ	795	549(69.05%)	246(30.94%)
26.	ԿԳՄ	1020	800(78.43%)	220(21.56%)
	Ընդամենը	27159	20469(75.36%)	6690(24.63%)

**XII-XVII դարերի գրաբարի ածական որոշիչ շարադասության**

N	Հեղինակ, երկ	Որոշիչ	Նախադաս	Հետադաս
1.	ՅՄԻ	137	85(62,20%)	52(37,95%)
2.	ՄՈՒԺ	812	624(76,84%)	188(23,15%)
3.	ՆՇՈՆ	478	234(48,95%)	244(51,04%)
4.	ՆՇԹԸ	812	681(83,86%)	131(76,13%)
5.	ՆԼԲ	299	224(74,91%)	75(25,08%)
6.	ՄԳԳԴ	468	373(79,70%)	95(20,29%)
7.	ՄԳԱ	106	74(69,81%)	32(30,18%)
8.	ՎԱԳՀ	620	500(80,64%)	120(19,35%)
9.	ԿԳՊՀ	1006	730(72,56%)	276(27,43%)
10.	ՎԱԾՆ	848	738(87,02%)	110(12,97%)
11.	ՎԱՊՏ	215	152(70,69%)	63(29,30%)
12.	ՅՈՎԱ	478	234(48,95%)	244(51,04%)
13.	ՍՕՊԱ	1017	852(83,37%)	165(16,22%)
14.	ՅԶՅԶ	334	254(76,04%)	80(29,95%)
15.	ԱՄՀԱ	415	360(86,74%)	55(13,25%)
16.	ԳՏԱՀ	881	703(79,79%)	128(20,20%)
17.	ՀՂՏ	454	418(92,02%)	36(7,92%)
18.	ԱՍԱ	552	263(47,64%)	289(52,35%)
19.	ԹՄՊ	662	556(83,98%)	106(16,01%)
20.	ԴՋՄԸ	381	306(80,31%)	75(19,68%)
21.	ԱՁԳՏ	204	178(87,25%)	26(12,74%)
22.	ԱԴԳՊ	1060	863(81,41%)	197(18,58%)
23.	ՉՍԶՊ	313	218(69,64%)	95(30,35%)
24.	ԽԱԳԶ	193	173(89,63%)	20(10,36%)
25.	ԳՀՎ	467	334(71,52%)	133(28,47%)
26.	ԿԳՄ	537	475(88,45%)	62(11,54%)
Ընդամենը		13749	10602(77,11%)	3147(22,88%)

Թիվ 9 և 10 աղյուսակներում բերված տվյալները ցույց են տալիս, որ V դարի համեմատությամբ որոշիչների նախադաս կիրառությունը ավելացել է մոտ 6%-ով, իսկ VI-XI դարերի համեմատությամբ՝ 3%-ով: Ածական որոշիչները համապատասխանաբար՝ մոտ 6%-ով և 5%-ով: Միայն XVII դարում նախադաս որոշիչները կազմում էին 75.35%, այսինքն՝ մոտ 6%-ով ավելի են, քան V դարում և մոտ 3%-ով ավելի, քան VI-XI դարերում: Ածական որոշիչները համապատասխանաբար՝ մոտ 11%-ով և 8%-ով: Լեզվի զարգացման ընդհանուր միտումը՝ նախադաս որոշիչների ավելի ու ավելի գերակշռող դառնալը, թեկուզ ոչ մեծ չափերով, այս շրջանում ևս պահպանվում է: Իսկ առանձին հեղինակների միջև այստեղ էլ կան բավական մեծ տարբերություններ: Այսպես, օրինակ, XII-XVII դարերի որոշ երկերում (ՆՇՈՆ, ԿԳՊՀ, ՎԱՊՏ, ԱՍԱ, ՉՍԶՊ) որոշիչների նախադաս գործածությունը 4-14%-ով պակաս է V դարի միջին մակարդակից, մի քանիսում (ՅՄԻ, ԳՀՎ) հավասար է դրան, իսկ մնացածներում այս կամ այն չափով բարձր է: Այս ամբողջ ժամանակաշրջանում կարելի է մատնանշել ընդամենը մի քանի հեղինակների երկեր (ՎԱԾՆ, ՅՈՎԱ, ՀՂՏ, ԴՋՄԸ), որոնցում նախադաս որոշիչների գործածության տոկոսը մոտավորապես այնքան է, որքան V դարի հեղինակ Եղիշեի երկում, կամ նրանից 4-5%-ով ավելի է: Տարբերություններն ավելի նկատելի են ածական որոշիչների դեպքում. ոճական առանձնահատկություններով պայմանավորված՝ միևնույն հեղինակի երկերից մեկում (ասենք՝ ՆՇՈՆ-ում) նախադաս ածական որոշիչները կազմում են 48.95%, իսկ մյուսում (ՆՇԹԸ)՝ 83.86%: Նախադաս ածական որոշիչները քանակով զիջում են հետադաս կիրառություններին մակ այլ գործերում՝ ՅՈՎԱ-ում, որտեղ դրանք կազմում են 48.95% և ԱՍԱ-ում՝ 47.64%: Դրան հակառակ՝ մի շարք երկերում (ՎԱԾՆ, ԱՄՀԱ, ԱՁԳՏ, ԽԱԳԶ, ԿԳՄ) ածական որոշիչի նախադաս կիրառությունները հասնում են 86-89 %-ի, իսկ մի երկում (ՀՂՏ)՝ ռեկորդային աստիճանի՝ ավելի քան 92%-ի:

XII-XVII դարերի գրարարի որոշիչ շարադասության

N	Հեղինակ, երկ	Համաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս	Անհամաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս
1.	ՅՍԻ	126(48,64%)	74	52	133(51,35%)	115	18
2.	ՍՄԻԺ	252(27,92%)	190	92	728(72,07%)	668	60
3.	ՆՇՈԵ	41(10,07%)	24	17	366(89,92%)	280	86
4.	ՆՇԹԸ	255(26,84%)	163	92	695(73,15%)	685	10
5.	ՆԼԲ	70(24,91%)	25	45	211(75,08%)	200	11
6.	ՄԳԳԳ	264(34,78%)	165	99	495(65,21%)	477	18
7.	ՄԳԱ	45(33,83%)	23	22	88(66,11%)	84	4
8.	ՎԱԳՀ	231(31,68%)	174	57	498(68,31%)	491	7
9.	ՎԱՃՆ	207(22,64%)	122	85	707(77,35%)	679	28
10.	ԿԳՊՀ	415(33,96%)	248	167	805(65,18%)	705	100
11.	ՎԱՊՏ	94(33,69%)	58	36	185(66,30%)	127	58
12.	ՅՈՎԱ	67(15,47%)	54	13	366(84,52%)	324	42
13.	ՍՕՊՄ	243(23,54%)	174	69	789(76,45%)	713	76
14.	ՅԶՅԶ	110(31,88%)	52	58	235(68,11%)	222	13
15.	ԱՄՀԱ	158(31,72%)	104	54	340(68,27%)	322	18
16.	ԳՏԱՀ	121(16,53%)	50	71	611(88,46%)	576	35
17.	ՀՂՏ	126(14,41%)	85	41	748(85,58%)	721	27
18.	ԱՍԱ	37(9,3%)	16	21	360(90,68%)	272	88
19.	ԹՄՊ	133(18,37%)	78	55	591(81,62%)	555	36
20.	ԴԶՄԶ	82(15,98%)	68	14	431(84,01%)	414	17
21.	ՍՋԳՏ	88(33,58%)	41	47	174(66,41%)	171	3
22.	ԱԴԳՊ	412(28,33%)	236	176	1042(71,66%)	971	71
23.	ԶՍԶՊ	104(28,77%)	65	39	258(71,22%)	237	21
24.	ԽԱԳԶ	86(45,98%)	70	16	121(64,70%)	120	1
25.	ԳՀՎ	153(38,25%)	94	59	247(61,75%)	245	2
26.	ԿԳՄ	212(38,54%)	132	80	338(61,45%)	326	12
Ընդամենը		4162(26,46%)	2585	1577	11562(73,53%)	10700	862

XII-XVII դարերի գրարարի ածական որոշիչ շարադասության

N	Հեղինակ, երկ	Համաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս	Անհամաձայն որոշիչ	Նախադաս	Հետադաս
1.	ՅՍԻ	35(35,71%)	16	19	63(64,28%)	58	5
2.	ՍՄԻԺ	128(24,09%)	76	52	386(75,09%)	381	5
3.	ՆՇՈԵ	32(12,54%)	9	23	223(87,45%)	154	69
4.	ՆՇԹԸ	141(21,49%)	72	69	515(78,50%)	514	1
5.	ՆԼԲ	44(22%)	8	36	156(78%)	156	0
6.	ՄԳԳԳ	70(21,76%)	22	48	253(78,32%)	249	4
7.	ՄԳԱ	23(33,33%)	5	18	46(66,66%)	45	1
8.	ՎԱԳՀ	71(17,88%)	38	33	326(82,11%)	325	1
9.	ՎԱՃՆ	91(15,74%)	43	48	487(84,25%)	480	7
10.	ԿԳՊՀ	220(36,18%)	115	105	388(36,81%)	377	11
11.	ՎԱՊՏ	38(32,20%)	19	19	80(67,79%)	78	2
12.	ՅՈՎԱ	9(6,38%)	7	2	132(93,61%)	132	0
13.	ՍՕՊՄ	136(20,02%)	94	42	543(79,97%)	518	25
14.	ՅԶՅԶ	41(28,27%)	6	35	104(71,72%)	101	3
15.	ԱՄՀԱ	58(19,86%)	25	33	234(80,13%)	233	1
16.	ԳՏԱՀ	69(15%)	15	54	391(85%)	378	13
17.	ՀՂՏ	24(8,13%)	8	16	271(91,86%)	270	1
18.	ԱՍԱ	23(9,16%)	7	16	228(90,83%)	148	80
19.	ԹՄՊ	83(21,95%)	44	39	295(78,04%)	292	3
20.	ԴԶՄԶ	13(6,25%)	5	8	195(93,75%)	185	10
21.	ՍՋԳՏ	19(14,84%)	2	17	109(85,15%)	109	0
22.	ԱԴԳՊ	178(24,02%)	95	83	563(75,97%)	544	19
23.	ԶՍԶՊ	19(13,86%)	12	7	118(86,73%)	114	4
24.	ԽԱԳԶ	15(16,85%)	8	7	74(83,14%)	74	0
25.	ԳՀՎ	87(35,51%)	54	33	158(64,48%)	158	0
26.	ԿԳՄ	94(28,74%)	67	27	233(71,25%)	230	3
Ընդամենը		1761(21,13%)	872	889	6571(78,86%)	6303	268

Եթե դասական գրաբարում որոշի համաձայնեցված կիրառությունները կազմում էին միջինը 37.14%, VI-XIդդ.՝ 33.99%, ապա XII-XVIIդդ.՝ 26.46%, այսինքն՝ վերջին շրջանում դրանք նվազել էին դասականի համեմատությամբ մոտ 11, իսկ VI-XI դարերի համեմատ՝ մոտ 8 տոկոսով: Ածական որոշիչների համաձայնեցումն այս շրջանում նվազել էր գրեթե նույն չափով. դասականի համեմատությամբ՝ մոտ 12, VI-XI դարերի համեմատությամբ՝ մոտ 7 տոկոսով: Իսկ եթե նկատի ունենանք միայն XVII դարի տվյալները<sup>8</sup>, ապա համաձայնեցված որոշիչները կազմում են 32.61%, ածական որոշիչները՝ 24.71%, այսինքն՝ համեմատաբար մեծ փոփոխություններ են տեղի ունեցել վերջին դեպքում: Այս շրջանում ևս զգալի տարբերություններ կան առանձին հեղինակների միջև՝ անկախ ժամանակից: Այսպես, օրինակ, մի շարք երկերում (ՅՍԻ, ԿԳՄ, ԳՀՎ, ԿԳՊՀ ևն) չհամաձայնեցված որոշիչները կազմում են 51-61%, իսկ որոշ երկերում (ԴԶՄԶ, ԳՏԱՀ ևն)՝ 83-91%: Նույն երևույթը կարելի է տեսնել նաև ածական որոշիչների պարագայում: Չհամաձայնեցվածության աստիճանը մի դեպքում տատանվում է 63-64, մի այլ դեպքում՝ 71-94 տոկոսի սահմաններում:

Արդ, ելնելով պատմական տարբեր ժամանակաշրջաններ ընդգրկող թիվ 11 և 12 վիճակագրական աղյուսակների տվյալներից, կարելի է հետևյալ ընդհանրացումներն անել գրաբարի որոշիչ շարադասության և համաձայնության զարգացումների վերաբերյալ՝ սկսած V դարից մինչև XVII դարը ներառյալ:

V դարում որոշիչն ուներ ազատ շարադասություն, դրվում էր որոշյալից թե՛ առաջ, թե՛ հետո, սակայն տարածվածը, զգալիորեն գերակշռողը նախադաս կիրառություններն են:

Իբրև ընդհանուր կանոն՝ հետադաս որոշիչները հոլովով ու թվով համաձայնեցվում էին իրենց որոշյալներին, իսկ նախադասվելիս սովորաբար չէին համաձայնեցվում: Երկու դեպքում էլ, հատկապես նախադաս կիրառություններում, առկա էին որոշ բացառություններ: Ընդհանուր առմամբ զգալիորեն գերակշռում էին չհամաձայնեցված որոշիչները:

Իբրև եզակի բացառություն՝ V դարի ինքնուրույն և թարգմանական ողջ մատենագրության մեջ առանձնանում է Աստվածաշունչը, որտեղ գերակշռողը հետադաս և չհամաձայնեցված որոշիչներն են:

Չանագան հանգամանքներով պայմանավորված՝ որոշիչ շարադասության և համաձայնության տեսակետից, ընդհանրությունների հետ մեկտեղ կան նաև առավել կամ պակաս չափով տարբերություններ առանձին հեղինակների երկերում:

Հետագա ամբողջ ժամանակաընթացքում (VI-XVIIդդ.) որոշիչ շարադասության և համաձայնության նշված առանձնահատկությունները պահպանվել են մենարևոդհանուր գծերով, չնայած առանձին դեպքերում տեղի են ունեցել լուրջ տեղաշարժեր:

V, մանավանդ XI դարից հետո, երբ գրաբարը զրկվել էր խոսակցական հիմքից և դարձել սովորովի լեզու, գրաբարով գրողները հնարավորինս ձգտում էին հետևել դասական գրաբարի նորմերին: Մյուս կողմից, նրանք չէին կարող չենթարկվել մի շարք գործոնների (նոր ժամանակների մտածողություն, լեզվի խոսակցական տարբերակների առկայություն, անհատական նախասիրություն, տվյալ երկի բնույթն ու նպատակը ևն) անխուսափելի ազդեցությանը, որի պատճառով

<sup>8</sup> Մույն ուսումնասիրության մեջ չենք անդրադարձել XVII դարի լատինական հայերենով գրված երկերին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ դրանց հայ կամ օտարազգի հեղինակները, հետևելով լատիներենի օրինաչափություններին, տառացիորեն բոլոր որոշիչները՝ նախադաս թե՛ հետադաս, հոլովով ու թվով արհեստականորեն համաձայնեցրել են իրենց որոշյալներին:

տարբեր կամ նույն ժամանակների հեղինակների կամ միևնույն հեղինակի տարբեր երկերում որոշչի շարադասությունն ու համաձայնությունը հաճախ զգալի տարբերություններ են ներկայացնում:

V դարից հետո, իբրև լեզվի զարգացման ընդհանուր միտում, դանդաղորեն, աստիճանաբար ավելի ու ավելի հաճախակի են դառնում նախադաս և չհամաձայնեցված որոշիչները, մանավանդ ածականով արտահայտվածները, որոնք առանձին դեպքերում մոտենում են գրեթե բացարձակությամբ աստիճանի:

### Համառոտագրություններ

- ՅՍԻ - Յովհաննես Մարկազազ Իմաստասեր, Նորին Յովհաննու քահանայի հակաբանութիւն հնագիտական ... գլ. ԺԳ (Ա. Գ. Արրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 140-147):
- ՄՈՒԺ-Մատթոս Ուռայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 150-250:
- ՆՇՈՆ - Ներսէս Շնորհալի, Ողբ Եղեսիոյ, Եր., 1982:
- ՆՇԹԸ - Ներսէս Շնորհալի, Թուրք ընդհանրական, Եր., 1995:
- ՆԼԲ - Ներսէս Լամբրոնացի, Բարեբանութիւն ներբողական գովութեամբ (Ընտիր մատենագիրք, Վենետիկ, 1838, էջ 243-281):
- ՄԳԳԴ - Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Եր., 1973, էջ 1-100:
- ՄԳԱ - Մխիթար Գոշ, Առակք (Հայոց հին և միջնադարյան արձակի Ջրեստոմատիա, Եր., 1981):
- ՎԱԳՀ - Վարդան Այգեկցի, Գիրք Հաստատութեան և արմատ հաւատոյ. Եր., 1998, էջ 71-224:
- ԿԳՊՀ - Կիրակոս Գամձակեցի, Պատմութիւն Հայոց, Եր., 1961, էջ 1-150:
- ՎԱԾՆ - Վարդան Այգեկցի, Ծառք, Ներբողեանք, Եր., 2000, էջ 24-78, 317-322:
- ՎԱՊՏ - Վարդան Արևեցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 1-20, 100-130:
- ՍՕՊԱ - Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն մահանգին Սիսական, Փարիզ, 1859, էջ 43-143:
- ՅԶՅԶ - Յովհաննէս Զոնեցի Յաղագս քերականին, Եր., 1977:
- ՅՈՎԱ - Յովհան Որոտնեցի, Վերլուծութիւն ստորոգութեանց Արիստոտելի, Եր., 1956, էջ 2-200:
- ԱՄՀԱ - Աբերտ Մեծ, Համառոտութիւն աստուածաբանութեան (թարգմանվել է հայերէն 1334թ.), Վենետիկ, 1715, էջ 172-192, 337-367:
- ԳՏԱՀ - Գրիգոր Տաթևացի, Ամարան հատոր, Երուսաղեմ, 1998, էջ 499-529:
- ՀՂՏ - Հակոբ Դրիմեցի, Տոմարական աշխատություններ, Եր. 1987, էջ 126-176:
- ԱՍԱ - Առաքել Սյունեցի, Աղամագիրք, Եր. 1989, էջ 13-103:
- ԹՄՊ - Թովմա Մեծփեցի, Պատմագրութիւն, Եր., 1999, էջ 1-150:
- ԴԶՄԸ - Դաիթ Զեյրունցի, Մեկնութիւն քերականին, Եր., 1981:
- ԱԶԳՏ - Սիմեոն Զուղայեցի, Գիրք տրամաբանութեան, Կոստանդնուպոլիս, 1728, էջ 140-170, 200-230:
- ԱԴԳՊ - Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, Եր., 1990, էջ 238-308:
- ԶՄԸՊ - Զաքարիա Մարկազազ Զանաքեոցի, Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, Կ. Ա, էջ 20-40, Կ. Բ, էջ 1-20, Կ. Գ, էջ 1-10:
- ԽԱԳԶ - Խաչատուր Արղրունեցի, Գիրք քերականութեան, Ալիկոննա, 1696, էջ 1-50:
- ԳՀՎ - Գիրք հայելի Վարոց, որ ասի Հարանց վարք, 1702, էջ 155-215:
- ԿԳԱ - Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն հայոց ս. եկեղեցոյն ընդ մեծ ս. եկեղեցոյս Հռովմայ, Հռովմ, 1690, էջ 22-72, 514-564:

**Г. М. АВETИCЯH - Позиция и согласование определения в арабаре V-XVII веков.** - В статье подвергаются обстоятельному статистическому анализу характерные особенности позиционного положения и согласования определения, что составляет одно из важных звеньев в синтаксической системе арабара на протяжении длительного периода, охватывающего различные этапы развития языка. Рассмотрены в отдельности соответствующие языковые явления, относящиеся к V, VI - XI, а также XII - XVII векам. Автор стремился показать, какими были закономерности в позициях и согласовании определений в V в. и какое развитие претерпели они в дальнейшем, вплоть до XVII в. включительно. На основе досконального анализа соответствующего материала он приходит к выводу, что после V века, как общая тенденция развития языка, наблюдается медленное, постепенное и все большее и большее распространение препозитивных и несогласованных определений, особенно же - определений, выраженных прилагательным.